Կոստանդին՝ յետ մահուանն Կալէ-րիոսի՝ ինքնակալեաց ամս Ժ.Գ.: Իսկ սա այր հանճարեղ և հեզ. որ հնազանդեցոյց զՍպանիա՝ գնալով բազում զօրօք 'ի վերայ նորա: Զոր երկեալ ամենայն աշխարհն ներքին և արտաքին՝ ամենայն արեւմտական կողմամբքն և Խուզոի և բարբարոս ազգն հնազանդեցան սմա: Իսկ 'ի դառնալն 'ի պատերազմէն՝ ասեն՝ զդուստրն Թէոռին Պօլթանիոյ զանհամեմատ գեղեցիկն սիրեաց և ննջեաց ընդ նմա, բայց ոչ ամուսնութեամբ, այլ հարճութեամբ. վասն սորա ասեն՝ թէ՝ յերկինս խաչ ետես և լուաւ ձայն՝ թէ այսու նշանաւս յաղթեա: Զոր արարեալ՝ յաղթեաց Հռոմայ և կոտորեաց զզօրս նոցա, և տիրեաց ամենայն աշխարհի:

Կոստանդիանոս մեծն սկսաւ յամի Տեառն ՅԻԳ. ինքնակալեալ ամս ԼԸ: Սա կոչեցաւ մեծահաւատ: Սա հրաման եհան՝ զի քրիստոնեայքն համարձակ կայ-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան